ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՆԴԿԱՍՏԱՆ ԵՎ ԱՎՍՏՐԱԼԻԱ

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, 1965 թվականի դեկտեմբերի 17-ին, ուրբաթ, *Հնդկաստան մեկնեց Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, Հնդկաստանի և հեռավոր Արևելքի հայոց հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանի հետ, հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, մասնակցելու Քոտայամում Հնդիկ Մալաբար Եկեղեցու հոգևոր ճեմարանի 150-ամյակի հանդիսություններին։*

Դեկտեմբերի 21-ին, երեքշաբթի, *Մոսկվա—Դելհի գծով Բոմբեյ է հասնում Տ. Կոմիտաս եպիսկոպոսը, ուր արդեն ժամանել էր Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը։ Տ. Կոմիտաս եպիսկոպոսը դիմավորվում է Տ. Հայկազուն արքեպիսկոպոսի, Բոմբեյի հայոց հոգևոր հովիվ Տ. Վազգեն քահանայի և եկեղեցական վարչության անդամների կողմից և առաջնորդվում հայոց եկեղեցին, ուր ողջունելով սակավաթիվ հայ հավատացյալներին, հաղորդում է Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները։*

Դեկտեմբերի 22-ին, չորեքշաբթի, *Տ. Հայկազուն արքեպիսկոպոսի նախագահության տակ և Տ. Կոմիտաս եպիսկոպոսի մասնակցությամբ, գումարվում է Բոմբեյի հայոց եկեղեցական վարչության նիստը, որին ներկա են լինում վարչության անդամներ տիկին Վարդուհի Բարսեղյանը (Բազիլ), տիկին Երանուհի Լորդը, դոկտ. Արամ Եղիազարյանը և Հայկ Գալայճյանը։ Տ. Կոմիտաս սրբազանը ժողովականներին փոխանցում է Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները և բարի լուրեր է հաղորդում Մայր Աթոռից և Նորին Ս. Օծության գործունեությունից։*

Դեկտեմբերի 25-ին, շաբաթ, *եվրոպացիների Ս. Ծննդյան տոնի առթիվ, Տ. Կոմիտաս եպիսկոպոսը պատարագում է Բոմբեյի Հայոց եկեղեցում և քարոզում օրվա մեծ տոնի նշանակության մասին, հաղորդելով նաև Հայոց Հայրապետի սիրո ողջույններն ու հայրական օրհնությունները թվով փոքր, բայց հոգով ջերմ այս համայնքի բոլոր անդամներին։*

Նախորդ կիրակի, Բանին կենաց քարոզությամբ ժողովրդին մխիթարել էր նաև հայրապետական պատվիրակ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը։

Երկու կիրակիներին մատուցված սուրբ պատարագների ընթացքում, ամբողջ գաղութը, մեծով ու փոքրով, հաղորդվում էր։ Բոմբեյում, ամեն կիրակի, պատարագում և քարոզում է տեղի հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Վազգեն քահանան, որն իր պաշտոնին և կոչման նվիրված հոգևորական է, սիրված իր ժողովրդից։

Դեկտեմբերի 25-ին, հետմիջօրեի ժամը 3-ին, Տ. Հայկազուն և Տ. Կոմիտաս սրբազանները ինքնաթիռով մեկնում են Քոչին—

Քոտայամ։ Երեքժամյա թռիչքից հետո, Հայ Եկեղեցու պատգամավորությունը Քոչինի օդանավակայանում դիմավորվում է Մալաբար Եկեղեցու պաշտոնական մարմինների կողմից և ինքնաշարժով առաջնորդվում դեպի Քոտայամ, ուր տեղի են ունենալու հոբելյանական հանդիսությունները։

Քոչինում մեր պատգամավորությանն է միանում նաև Անթիլիասի միաբան գերաշնորհ Տ. Գարեգին եպիսկոպոս Սարգիսյանը։

Ժամը 7-ին պատգամավորությունը հասնում է Քոտայամ։

Դեկտեմբերի 26-ին, կիրակի, Քոտայամի հոգևոր ճեմարանի 150-ամյակին նվիրված հանդիսության առաջին օրն է։ Ժամանել են քույր եկեղեցիների պատգամավորությունները։

Առաջին օրվա հանդիսությունն սկսվում է ճեմարանի մատռան մեջ, սուրբ պատարագի մատուցմամբ։ Պատարագիչն է վերատեսուչ Տ. Աթանասիոս եպիսկոպոսը։ Հավարտ սուրբ պատարագի, հոգեհանգստյան պաշտոն է կատարվում ճեմարանի հիմնադիր ժողեֆ Մար Դիոնեսիոսի գերեզմանի վրա։ Հանգուցյալը եղել է նաև ամբողջ Քերալա նահանգի միտրոպոլիտը, վախճանված 1860 թվականի նոյեմբերի 25-ին։

Երեկոյան ժամը 4-ին, տեղի է ունենում հանդիսության շարունակությունը, ճեմարանի շրջափակում, մեծ տաղավարի տակ, ուր հանդես է գալիս ճեմարանի վերատեսուչ Տ. Աթանասիոս սրբազանը ճեմարանի դերին և պատմության նվիրված մեծ ճառով։

Հանդիսության նախագահում է Մալաբար Եկեղեցու Կաթողիկոս Նորին Սրբություն Բասիլիոս Եվգինեոս Ա-ը։

Պետական, պաշտոնական անձանց ողջույնի խոսքերից հետո, առաջինը ելույթ է ունենում գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը հանուն Հայ Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, անգլերեն լեզվով։ Սրբազանը հաղորդում է նախ Հայոց Հայրապետի ողջույններն ու խնդակցությունը հոգևոր ճեմարանի 150-ամյակի առթիվ և շեշտում է հոգևոր դպրեվանքների դերը Եկեղեցու կյանքի ամրապնդման և գործունեության ասպարեզում, նշելով միաժամանակ Հայ և Հնդիկ Մալաբար եկեղեցիների ճակատագրի նույնությունը անցյալ դարերում, մարտիրոսագրությունը՝ հանուն Քրիստոսի կրոնի և այսօրվա հոգևոր եղբայրակցության և համագործակցության անհրաժեշտությունը՝ ի փառս Ս. Ավետարանի։

Դեկտեմբերի 27-ին, երկուշաբթի, ճեմարանի մատռան մեջ, մատուցվում է հայկական սուրբ պատարագ։ Պատարագիչն է գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը։ Սարկավագի բաժինը կատարում է Տ. Գարեգին եպիսկոպոսը, իսկ պատարագի Կոմիտասյան երգեցողությունը կատարում է Տ. Կոմիտաս եպիսկոպոսը։ Մադրասի Հայոց եկեղեցու պահակ Ժորժ Գևորգյանը խնկարկում է։ Հայոց պատարագին ներկա են բոլոր հոգևորականները, ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը, քույր եկեղեցիների պատգամավորները։ Մալաբար հոգևորականներից ոմանք հաղորդվում են։ Միսական տեսակետից Հայ և Մալաբար եկեղեցիների միջև չկա ոչ մի տարբերություն։

Սուրբ պատարագից հետո, տեղի է ունենում դասախոսություն «Երիտասարդությունը և եկեղեցին» նյութի շուրջ։ Այս թեմայի շուրջ ելույթ է ունենում նաև Տ. Գարեգին եպիսկոպոսը։

Կեսօրից հետո, պատգամավորներն ընդունվում են Նորին Սրբություն Բասիլիոս Եվգինեոս Ա Կաթողիկոսի կողմից։ Առաջինը ընդունվում են Հայ Եկեղեցու պատգամավորները՝ հանձին Տ. Հայկազուն և Տ. Կոմիտաս սրբազանների, որոնք Հայոց Հայրապետի եղբայրական ողջույններն ու բարեմաղթությունները ներկայացնելուց հետո, Նորին Սրբությանը հանձնում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի նվերները՝ գեղեցկահյուս արծաթյա ոսկեջրած սկիհ և հայրապետական արծվեգորգ։

Ժամը 7-ին, ճեմարանի ուսանողությունը, ի պատիվ պատգամավորների, ներկայացնում է «Քրիստոսի մատնությունը և Հուդայի վախճանը» փոքր թատերգությունը։

Դեկտեմբերի 28-ին, երեքշաբթի առավոտյան, Հայ Եկեղեցու պատգամավորությունը ծանոթանում է Քոտայամի պատմական եկեղեցիներին և տեսարժան վայրերին։

Հետմիջօրեի ժամը 2-ին, Կաթողիկոսի նախագահությամբ, քաղաքում պատրաստված մի ընդարձակ տաղավարի տակ, կատարվում է հրապարակայնորեն, ժողովրդի քվեներով, մալաբար հինգ եպիսկոպոսացուների թեկնածության առաջադրությունը։ Հանուն Հայոց Հայրապետի, ելույթ է ունենում Տ. Կոմիտաս եպիսկոպոսը, որը ողջունում է սույն ժողովրդական հավաքույթը, Հայ Եկեղեցու խնդակցությունն ու բարեմաղթությունը բերելով Մալաբար Քույր Եկեղեցու բարգավաճման և պայծառության աշխատանքներին։

Դեկտեմբերի 29-ին, չորեքշաբթի, ճեմարանին կից մեծ տաղավարի ներքո մատուցվում է սուրբ պատարագ, ռուսական ծեսով։ Պատարագիչն էր գերաշնորհ Տ. Ա-

Գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոսը Սիդնիում, հայոց եկեղեցու օծումից հետո:

լեքսի արքեպիսկոպոսը, Ռուս եկեղեցու պատգամավորության ղեկավարը։

Ժամը 10-ին, կարդացվում է երկրորդ դասախոսությունը՝ «Աստվածաբանության ուսուցումը և եկեղեցին» թեմայով։

Դեկտեմբերի 30-ին, հինգշաբթի, հոբելյանական հանդիսությանց վերջին օրն է։ Հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում Նորին Սրբություն Բասիլիոս Եվդոկիոս Ա Կաթողիկոսը, բացօթյա, մեծ տաղավարի տակ, ի ներկայության քույր եկեղեցիների պատգամավորների և պաշտոնական անձանց։ Հավարտ սուրբ պատարագի, եկեղեցական թափորն առաջնորդվում է դեպի նոր ճեմարանի շենքի հողամասը, որի հիմնաքարը օրհնել է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը 1963 թվականի նոյեմբերին, երբ այցելել էր Քոտայամ։ Մարմարյա հուշատախտակի վրա գրվել էր. «Սույն հիմնաքարը զետեղեց Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, 1963 թվականի նոյեմբերին»:

Ճեմարանի նոր շենքի հիմնարկի օրհնությունից հետո, բոլոր ներկաների մասնակցությամբ, փորվում է շենքի հիմքը։

Ժամը 2-ին, տեղի է ունենում վերջին հանդիսավոր նիստը, նվիրված էկումենիկ շարժման։ Այլ ելույթ ունեցողների թվում, Հայ եկեղեցու պատգամավորներն ևս մասնակցում են զրույցին։ Տ. Կոմիտաս եպիսկոպոսը երգում է «Ուրախ լեր» շարականը, Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը հանդես է գալիս ճառով, շեշտելով էկումենիկ շարժման կարևորությունը, քրիստոնեական եղբայրության և ավետարանական սիրո հաստատման մեջ։

Երեկոյան ժամը 4-ին, ճեմարանի այգում տրված թեյասեղանի ժամանակ, Նորին Սրբություն Վասիլիոս Եվդոկիոս Ա Կաթողիկոսը փակում է ճեմարանի 150-ամյակի հանդիսությունը՝ բոլոր ներկաներին ուղղված շնորհակալության ջերմ խոսքերով և աղոթքով։

Բոլոր ներկաները, միարան, իրենց ազգային լեզուներով, երգում են «Հայր մեր»-ը։

Դեկտեմբերի 31-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 10-ին, Հայ եկեղեցու պատգամավորությունը հրաժեշտ է առնում Նորին Սրբությունից, բարձրաստիճան մալաբար հոգևորականներից, ճեմարանի դասախոսական կազմից և ուսանողությունից ու մեկնում Քոչին։

1966 թվականի հունվարի 1-ին, շաբաթ, հետմիջօրեի ժամը 2-ին, մեր պատգամա-

վորները հասնում են Մադրաս և դիմավորվում տեր և տիկին Ճ. Գրիգորյանների կողմից և առաջնորդվում հայոց եկեղեցի, ուր հաղորդվում են Մադրասում ապրող 4 հայերի։ Ապա հոգելույս Տ. Հարություն քահանա Շմավոնյանի՝ առաջին հայ պարբերականի հիմնադրի գերեզմանի և եկեղեցու բակում թաղված բոլոր ննջեցյալների վրա կատարում են հոգեհանգիստ։

Հունվարի 2-ին, կիրակի, Տ. Հայկազուն և Տ. Կոմիտաս սրբազանները ժամանում են Կալկաթա և առաջնորդվում «Հրաշափառ»-ով հայոց եկեղեցի, ուր Տ. Կոմիտաս եպիսկոպոսը հաղորդում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները Կալկաթայի հայոց եկեղեցական վարչության և պատվական համայնքի անդամներին։

Հունվարի 6-ին, հինգշաբթի, Կալկաթայի հայոց եկեղեցում, Տ. Կոմիտաս եպիսկոպոսը հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում Փրկչի Ս. Ծննդյան տոնի առթիվ և Բանին կենաց քարոզությամբ մխիթարում հավատացյալներին։

Հունվարի 19—24-ին, Տ. Հայկազուն և Տ. Կոմիտաս սրբազանները թեմական այցելություն են կատարում Ջինսուրայի, Սահդաբադի, Ասանսոլի, Բրընպուրի, Դանրագի և Ջալղայի հայ եկեղեցիներին և համայնքներին, սուրբ պատարագի մատուցմամբ, քարոզով, եկեղեցական արարողություններով և տնօրհնեքով մխիթարում հավատացյալներին, հաղորդելով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները։

Տ. Կոմիտաս եպիսկոպոսի Կալկաթայում գտնված օրերին, հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսի նախագահության տակ և Տ. Կոմիտաս եպիսկոպոսի մասնակցությամբ, գումարվում է Կալկաթայի հայոց եկեղեցական վարչության նիստ, որին մասնակցում են վարչության բոլոր անդամները, այդ թվում Կարո Մարտինը, Հովհաննես Միքայելյանը, Հայկ Նաճարյանը, Նեստոն Բարսեղյանը, Սամ Ավետիքյանը, Հովսեփ Արաթունը և այլ պաշտոնական անձինք։

Տ. Կոմիտաս սրբազանը վարչության անդամներին հաղորդում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները և բարի լուրեր Մայր Աթոռից և Վեհափառ Հայրապետի տասնամյա գործունեության եկեղեցանվեր, ազգօգուտ ձեռնարկների մասին։

Տ. Կոմիտաս եպիսկոպոսը այցելում է նաև Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանը, տեսուչ պր. Վահան Փոլատյանին, դասախոսական կազմին և աշակերտության փոխանցելու Հայոց Հայրապետի սիրո ողջույններն ու օրհնությունները։

Տ. Կոմիտաս եպիսկոպոսը այցելում է նաև Դավթյան օրիորդաց վարժարանը։

Կալկաթայի Մարդասիրական ճեմարանը և Դավթյան օրիորդաց վարժարանը լավագույն հուշեր են պահում 1963 թվականի դեկտեմբերից, երբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը հովվապետական այցելություն տվեց ճեմարանին։

Փետրվարի 5-ին, շաբաթ, Տ. Կոմիտաս սրբազանը մեկնում է Ավստրալիա՝ հովվական այցելության։

Փետրվարի 6-ին, կիրակի, սրբազանը ժամանում է Սիդնի, ուր դիմավորվում է արժանապատիվ Տ. Արամայիս ավագ քահանա Միրզայանի, եկեղեցական վարչության անդամների և բազմաթիվ հայերի կողմից ու առաջնորդվում հայոց եկեղեցի, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով ու հաղորդում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները։

Ավստրալիայում ապրում են շուրջ 7 000—8 000 հայեր։ Գաղութը մեծանում է 1961 թվականից սկսած Եգիպտոսից, Պարսկաստանից, Լիբանանից, Սիրիայից, Պաղեստինից, Կիպրոսից և այլ վայրերից գաղթած հայերով։

Հայությունը հիմնականում կենտրոնացել է Սիդնիում և Մելբուռնում։

Սիդնիում ապրում է շուրջ 4 000—5 000 հայություն։ Վերջերս գաղութը օժտվեց նոր գնված հայկական մի եկեղեցիով։ Գաղութի ազգային-եկեղեցական կյանքի կենտրոնը եկեղեցին է հանդիսանում, որի արժանավոր հոգևոր հովիվն է Տ. Արամայիս ավագ քահանա Միրզայանը՝ պատրաստված, լուրջ և իր կոչման բարձրության վրա գտնվող մի հոգևորական։

Գաղութն ունի իր ընտրովի եկեղեցական վարչությունը, որի անդամներն են արժանապատիվ Տ. Արամայիս ավագ քահանա Միրզայանը (նախագահ), սլարոնայք Վահան Հարությունյանը (ատենապետ), Լևոն Շյոհմելյանը, Կոստանդ Տեր-Ստեփանյանը, Վիլի Էլիսը, Գոլո Էդդարը, Մինաս Արգարը և Հակոբ Գութությանը։

Սիդնիի հայ գաղութի պատվական անդամներից է պր. Ա. Ակինյանը, որ նախկին վարչության ատենապետն էր։ Պր. Ակինյանը արդարորեն կոչված է «գաղութի հայր»՝ եկեղեցանվեր իր գործունեության համար։ Նա իր բարոյական հեղինակությամբ օգտակար

է լինում Տ. Կոմիտաս եպիսկոպոսի հովվական այցելության հաջողության համար։

Սիդնիի հայոց եկեղեցին ունի երկու սրահներ, որոնք օգտագործվում են հավաքույթների և կիրակնօրյա դպրոցի համար, որը նոր է կազմակերպվում։ Գաղութը տնտեսապես ինքնարավ է։ Հայերն զբաղվում են առևտրով, արհեստներով և բանվորությամբ։ Գաղութում գործում են մի շարք մշակութային, մարզական և երիտասարդական կազմակերպություններ։

Փետրվարի 27-ին, Տ. Կոմիտաս սրբազանը կատարում է Սիդնիի հայոց նոր եկեղեցու օծման հանդիսությունը, բացառիկ խանդավառ և ջերմ մթնոլորտում։ Սրբազանը իր օարոգում հաղորդում է Ամենայն Հայոց Հայրապետի ողջույնները և խոսում է Հայ Եկեղեցու ազգապահմանման մեծ դերի մասին։

Փետրվարի 18-ին, Տ. Կոմիտաս սրբազանն այցելում է նաև Մելբուռն, ուր ապրում են 300 հայ ընտանիքներ, շուրջ 1 500—2 000 հոգի։ Մելբուռնում կա հայկական եկեղեցի, որի հովիվն է հոգեշնորհ Տ. Ոսկան աբեղա Գալփաքյանը, երիտասարդ, խոստումնալից մի հոգևորական, լցված աշխատանքի ոգևորով և հեռավոր այդ ափերի վրա գտնվող հայ ժողովրդի բեկորներին օգտակար լինելու ազնիվ ցանկությամբ։

Փետրվարի 20-ին, Տ. Կոմիտաս սրբազանը քարոզում է և պատարագում Մելբուռնի հայոց եկեղեցում, հաղորդելով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույնները ու օրհնությունները իր հավատացյալ զավակներին։

Մելբուռնի հայոց եկեղեցին գնվել է երեք տարի առաջ. ունի երիցատուն և ընդարձակ հողամաս, որի վրա ծրագրվել է կառուցել հայկական մեծ սրահ՝ հավաքույթների համար և դասարաններ՝ կիրակնօրյա դպրոցի կարիքների համար։ Եկեղեցու հողամասը կունենա նաև իր խաղավայրը։

Մելբուռնի հայերը նույնպես զբաղվում են առևտրով, արհեստներով և բանվորությամբ։

Մելբուռնի հայակական գաղութն ունի իր եկեղեցական վարչությունը, որի անդամներն են հոգեշնորհ Տ. Ոսկան աբեղա Գալփաքյանը (նախագահ), պարոնայք Նաղարեթ Գարակյոզյանը (ատենապետ), Կարապետ Կայծքարը, Ներսես Գանգաշյանը, Ջորջ Կայծքարը, Բյուզանդ Քեշիշյանը, Խորեն Ակինյանը և Կարապետ Նիկոլյանը։ Գաղութն ունի նաև տիկնանց, մշակութային և երիտասարդական կազմակերպություններ, մանավանդ Ադելաիդ, Դարվին և այլ քաղաքներում։

Ավստրալիայի այլ քաղաքներում ևս ապրում են շուրջ 30 հայ ընտանիքներ։

Փետրվարի 22-ին, Տ. Կոմիտաս սրբազանը Մելբուռնի հովվական այցելությունից վերադառնում է Սիդնի, ուր հայ եկեղեցու օծումը կատարելուց և իր հրաժեշտի պատարագը մատուցելուց հետո, լավագույն տպավորություններով և հուշերով մարտի 10-ին, հինգշաբթի, Կալկաթա—Մոսկվա ճանապարհով ժամանում է Մայր Աթոռ։